

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀԱՅ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ
СЕКТОР ИСТОРИИ АРМ. МЕДИЦИНЫ И БИОЛ. АН АРМ. ССР
Աշխատություններ

№ 1, 1948

Տ Ր Ո Ւ Ը

Գ. Ա. ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԾԱՆՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ

Բժշկականությունը, ինչպես և պետական ու հասարակական կյանքի բոլոր այլ կողմերը, կապիտալիստական երկրներում լի է կապիտալիստական իրավակարգին յուրահատուկ հիմնական հակասություններով, կապիտալիստական դարաշրջանի այդ առանձնահատկությունները առավել պայծառությամբ ի հայտ են դալիս, երբ մենք քննության ենք առնում առողջապահական գործի կաղմակերպման պատմությունը ցարական Ռուսաստանում:

Լենինը՝ բնորոշելով մեր երկիրը մինչև ռեռուցիան, ասել է, «որ ցարիզմը՝ դա սազմա-ֆեոդալական իմպերիալիզմն է, որի մեջ պրոցեսիվ կապիտալիզմի էլեմենտները, իմպերիալիստական տեսքնենցները, կողք-կողքի տպրում են ֆեոդալական իրավակարգի մնացորդների հետ»:

Եշեղինը երգիծական բնութագիր է տվել ցարական Ռուսաստանի իրավակարգին. «Ներեցեք, միլիոնավոր մարդիկ ուժապառ են լինում, գամված հոգին ու աշխատանքին, տեղյակ չլինելով ոչ երկամմերի և ոչ թոքերի մասին, իմանալով միայն մի բան, որ նրանք գատապարտված են աշխատելու, և հանկարծ այդ անսահման սարկական ծովից ջոկվում են մի քուռ ճշմարտասերներ, որոնք ինքնիշխան զեկրիստագրում են, թե ինչ որ մեկի համար և ինչ որ բանի համար հարկավոր է, որպեսզի նրանց երիկամմերը կանոնավոր գործեն»:

Առողջապահության գործի կաղմակերպման բնագավառում բոլոր կապիտալիստական երկրների շարքում ցարական Ռուսաստանը հետամնացներից մեկն էր:

Եթե մենք հետաքրքրվելու լինենք ցարական Ռուսաստանում առողջապահության ամբողջ գործը կառավարելու վերաբերյալ գոյություն ունեցող օրենքներով, ապա «Ռուսական կայս-

ըության օրենքների ժողովածուի» (18-ըդ հատորում, հրատա-
րակ. 1905 թ.) այսպես կոչված բժշկական կանոնադրության
մեջ կդատնենք մի հոդված, ուր ասված է.

«Բժշկա-սանիտարական մասի բարձրագույն կառավարչու-
թյունը վերաբերում է Ներքին գործերի մինիստրության իրա-
վասությանը»:

Վայելում էր արդյոք Ներքին գործերի մինիստրությունն
այդ տեսակետից լիակատար իշխանություն. հանդիսանում էր
նա արդյոք պետական իշխանության այնպիսի մի օրդան, որին
պատկաներ բժշկական և սանիտարական օգնության նորմաներ
սահմանելու իրավունքը:

Ինարկե ոչ: Ընդհակառակը, կենտրոնական սանիտարական
իշխանության այդ ֆիկտիվ օրգանների կողքին ցարական Ռու-
սաստանում գոյություն ունեին մի շարք այնպիսի հասարա-
կություններ ու գերատեսչություններ, որոնք վերահսկողության
իմաստով միանգամայն ազատազրված էին Ներքին գործերի մի-
նիստրության որևէ ազգեցությունից և ղեկավարությունից:

Կային հսկայական տերիտորիաներ, որոնց վրա չեր տա-
րածվում Ներքին գործերի մինիստրության իշխանությունը:
Դրանք, այսպես կոչված, Կուրսանի, Դոնի կազակային մարզերն
էին, Թուրքեստանի գեներալ-նահանգապետությունը, Աստրախա-
նի, Սիբիրի, Սեմբեչենսկի, Զաբայկալի կազակային զորքերը
և այլն:

Առանց բացառության բոլոր գերատեսչություններն և մի-
նիստրություններն ունեին իրենց սեփական, նկատելի չափով
ինքնավար, բժշկական մասերը:

Եթե հանքերն ու գործարանները կառավարվում էին Առե-
տրի և արդյունաբերության մինիստրության կողմից, ապա բժըշ-
կական մասը տվյալ դեպքում անցնում էր այդ գերատեսչու-
թյան իրավասությանը:

Եթե հանքերն ու հանքագործարանները վարչական կա-
խում չունեին Հողագործության և հողաշինարարության գլխա-
վոր վարչությունից, ապա բժշկական մասը ենթակա էր նրա
իրավասությանը:

Նույնիսկ մի այնպիսի ակնհայտնի բժշկական հաստատու-
թյուն, որի բուն էությունը բնակչության սպասարկելն է, որի-
նակ՝ Հանքային ջրերը, ինչպես նաև մի շարք ուրիշ կուրորտ-
ներ, գտնվում էին Առետրի ու արդյունաբերության մինիստրու-

թյան իրավասության տակ, որովհետև օրենսդրի միտքը հետևյալ ուղղությամբ էր աշխատում՝ եթե այդ բարիքը՝ հանքային ջուրը, վաճառվում է, ապա պարզ է, որ այդ բարիքի առետրի գործը ևս պետք է կենտրոնացված լինի առետրական գերատեսչություններում։

Հարց է առաջանում, թե ինչպես էր կառուցված ներքին գործերի մինիստրությունը քաղաքացիական բնակչության վերաբերմամբ, Ուներ նա արդյոք մի այնպիսի միասնական օրագան, որը հանրավորություն տար մինիստրությանը բժշկության և սանհիտարիայի ահսակեաից տանելու լրիվ ու ամբողջովին միասնական քաղաքականություն։

Դոյյություն ուներ Բժշկական տեսչի գլխավոր վարչություն, որին օրենքով պատկանում էր բժշկական հսկողության բնագավառում վարչական իշխանությունը, Վերջինս հսկում էր թե ինչպես են մարդային և գավառական բժիշկներն իրագործում իրենց փունկցիաները։

Բժշկական տեսչի գլխավոր վարչության և Տեղական տեսչության գլխավոր վարչության միջև մշտապես տեղի էին ունենում ամենասուր կոնֆլիկտներ։

Բժշկական տեսչի գլխավոր վարչության ու Տեղական տեսչության գործերի գլխավոր վարչության քաղաքականությունն ամենուրեք միանդամայն անհամատեղիլի և բացահայտողեն թշնամական էին միմյանց։

Ապա բժշկական գիտելիքների հիմնական պրոբլեմների հետ կապված գիտական հարցերը, բժշկական կրթության հարցերը, բժիշկների կատարելագործման և մասնագիտացման հարցերը.—մասնաւմ էին արդյոք դրանք Բժշկական տեսչի գլխավոր վարչության իրավասության մեջ։—Ոչ Դրանց համար գոյություն ուներ մի առանձին օրգան, Բժշկական խորհուրդ, որը ենթակա չէր Պահապոր տեսչին։ Խորհրդի նախագահին իրավունք էր վերապահված անմիջականորեն զեկուցելու Ներքին գործերի միանիստրին։

Այսպիս էր, ընդհանուր գծերով, բժշկական և սանհիտարական գործի կառուցվածքը նրա բոլոր ինստիտուտներում—մինիստրություններում։

Ապա ի՞նչ կար տեղերում։—Այստեղ գոյություն ուներ ինքնակարության շահերը բավարարող մի իշխանություն՝ հանձին նահանդապետի։

Միացնում և կոորդինացնում է ը նա արդյոք առողջապահության գործն իր տերիտորիայի վրա:

Պրակտիկան ցույց էր տալիս մի շարք գեղքեր, երբ ամենաչնչին առիթով սուր կոնֆլիկտներ էին տեղի ունենում միշտույն նահանգի տերիտորիայի վրա գանվող գերատեսչությունների միջև:

Շատ հաճախ գեներալ-նահանգապետը ի վիճակի չէր լինում հարկադրելու, օրինակ, երկաթուղու վարչության պետին, որ սա կարգի բերի կոյուղին, որը վարակման աղբյուր էր հանդիսանում այս կամ այն երկաթուղային կետի բնակչության համար: Դործն անցնում էր բոլոր բյուրոկրատական ինստանցիաները, իսկ համաճարակը ծավալվում էր:

Ապա ի՞նչ էր անում նահանգական բժշկական վարչությունը:— Օրենքով նրան էր պատկանում բժշկական և սանիտարական մասի բարձրագույն հսկողությունը, բայց երբ խոսքն անցնում էր ունակ իրավունքների, միասնական միջոցառումների իրագործման հնարավորությանը, ապա գործը հանգում էր առանձին հիմնարկների միջև տեղի ունեցող անվերջ պառակտումների:

Բացի գրանից գրյություն ունեին հիմնարկներ, որոնք անձեռնմխելի էին նահանգապետի և բժշկական տեսչի իշխանության համար: Վերջին հաշվով նահանգապետի և գավառական բժշկական տեսչի աշխատանքը հանգում էր էքսպերտիզա անցկացնելուն, դիակներ հերձելուն, վիրավորումների և ծեծերի գեղքերում դատական մարմիններում և դատարանում ցուցմունքներ տալուն:

Ահա թե ինչի էր հանգում բնակչության բժշկական և սանիտարական սպասարկման պետական սիստեմը ցարական նորուսաստանում:

Գուցե ուրիշ ուժեր կային ցարական Ռուսաստանում: Մինչև Հոկտեմբերյան ռեվոլուցիան գոյություն ուներ պատրանքի վրա հիմնված մի հայացք, թե զեմսավոյական ինքնավարությունը, ի դեմս նրա հիմնարկների, ապահովում էր քաղաքների և գյուղերի բնակչության պահանջները:

Զեմսավոյական վարչության վերաբերող օրենքը այսպես է սահմանում բժշկական և սանիտարական գործի իրավունքները:

«Մասնակցել ժողովրդական առողջապահության պահպանման, վարակիչ և համաճարակային հիվանդությունների կանխ-

ման ու դադարեցման, բնակչության քժշկական օգնություն հասցնելու միջոցների զարգացման, սանհիտարական տեսակետից վայրն ապահովելու եղանակներ որոնելու միջոցառություններ միջամտության առաջ:

Խնդիրը սահմանափակվում էր այն բանով, որ այդ հիմնարկներին միայն մասնակցություն էր վերապահվում, օրենքն որոշակի պարտավորություններ չէր գնում զեմստվոյական վարչության առաջ:

Իսկ զեմստվոյական ինքնավարությունները կարող էին արդյոք, ըստ իրենց սոցիալական բնույթի, ըստ այն դերի, որ կոչված էին նրանք պատմականորեն խաղալու Ռուսաստանի տընտեսական ու սոցիալական զարդացման մեջ, իրենց առաջադրել գյուղական բնակչությանը սպասարկելու պրոբլեմը:

Երբերաշաղնավական շրջանները, որոնք պարունակում էին ապաղա հողային և արդյունաբերական բուրժուագիայի սաղմերը, հավակնություն ունեին առավելագույն չափով պահպանելու իրենց ձեռքում զեմստվոյական իշխանության նորածնունդ օրգանները:

Ազնվականությունն այդ ուղղությամբ մի ամբողջ ծրագիր մշակեց:

Ազնվականության գաղափարախոսներից մեկը գրում էր.— «Գիրագույն իշխանությունն իր շուրջն է գումարում հարազատներին, իր օրինական եղայրներին և նրանց հետ ամուր հիմքերի վրա կվերականգնի ներկայումս տատանվող պետական կարգը»:

Սա միանգամայն անկերծ, ոչնչով չքողարկված մի տեսնգենց էր պահպաններու ազնվականների ձեռքում ամբողջ իշխանությունը զեմստվոյական ժողովներում: Զեմստվոյական ինքնավարության 1890 թ. ռեֆորմն անցալ ազնվականության գերակըշուությունն ուժեղացնելու նշանաբանի տակ, բարձրացրեց ազնվական ձայնավորների տոկոսը մինչև 55,2%-ի: Անշուշտ, այսուղից հասկանալի է, որ զեմստվոյական ժողովները, այն ազնվականները և կալվածատերերը, որոնք նստած էին այդ ժողովներում, առանձնապես դրդապատճառներ չունեին սանհիտարական տեսակետից բնակչությանը բավարարելու աշխատանքը լայն ծավալելու համար: Այդ ուղղությամբ զեմստվոյական գործիչների հորիզոննը մի շարք տասնամյակների ընթացքում ծայր աստիճան նեղ էր:

Այնուամենայնիվ առաջավոր բժիշկներն իրենց սեփական

Նախաձեռնությամբ կարողացան տեղական գեմսով յական ինք-նավարություններում սանհիտարական աշխատանքի յուրահա-տուկ ձևեր ստեղծել: Այդ աշխատանքը որոշ արգյունքներ էր տալիս առաջնաձին հաճաճարակների դեմ մղվող պայքարում:

Ազատասիրությամբ տոգորված հասարակական գործիչ-բը-ժիշկների մի խումբ (Կուրկին, Սեմաշկո, Բոգուտավակի, Տեղակով, Սոլովյօվ, Արաւտամյան, Պագածան, Դեմենտև և ուրիշները) ար-տասովոր դժվարությամբ, մեծ ջանքերից հետո որոշ չափով բա-րելավեցին իրենց տեղամասերի սանհիտարական վիճակը:

Նրանց փորձը և նրանց կիրառած միջոցառությունը շատ կողմերով հետագայում դյուրացրին սովետական առողջապահու-թյան ստեղծագործ գործուներությունը:

Այսպես էր 19-րդ դարի վերջին ցարական Ռուսաստանում ժողովրդական առողջության վիճակը հիմնականում, ներառյալ բժշկական կուլտուրայի, առողջապահության գործի և սոցիալա-կան միջավայրի միջև եղած փոխազդեցության առանձնա-հատկությունները:

Հայաստանում ցարական ինքնակալության և դաշնակցա-կան տիրապետության անցողիկ շրջանի բժշկական գործի վիճա-կին վերաբերող փաստաթղթերի թիվը բավականին շատ է:

Այդ փաստաթղթերը սովետական իշխանության ժամանակ ուսումնասիրության են ենթարկվել մի շարք գիտնականների և բժիշկների կողմից:

Այդ գործին երկար ժամանակ, առանձնապես, մեծ ուշա-դրություն է նվիրել ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանը: Հա-յաստանի բժշկականության պատմության առանձին հարցերով զբաղվել են նաև Գ. Ս. Պապովյանը, Թ. Ն. Փիրումովը, Բ. Ն. Մելիք-Մուսյանը, Ա. Հ. Մելիքյանը, Խ. Ա. Մելիք-Փարսադանյանը, Գ. Գ. Հարությունյանը և ուրիշներ: Սակայն ունեցած նյութը դեռևս լիովին չի ուսումնասիրված:

Այն հետաքրքրությունը, որն առաջացել է Հայկական ՕԾՌ բժիշկների մեջ ակադեմիկոս Հովհաննիսյանի աշխատություննե-րով ու գեկուցությունը, լավագույն երաշխիքն է այն բանի, որ բժշկականության պատմության և բիոլոգիայի ուսումնասիրման Սեկտորի անդամները եռանդուն կանցնեն գործի և շատ ժամա-նակ չի անցնի, երբ մեր բժշկական գիտությունը կհարստանա-չափազանց արժեքավոր հետախուզություններով:

Մինչում եռոտական շրջանի Հայաստանի առողջապահական գործի վիճակին նվիրված մեր նախկին հաղորդումներից մեկի մեջ մենք չենք կարող կանգ չառնել ցարական Ռուսաստանի բժըշկական գործի առաջատար հարցերի վրա, որովհետև 1828 թվականից հետո, երբ Թուրքմենչայի հաշտության պայմանագրի համաձայն՝ Ռուսաստանին անցան Անդրկովկասյան (Երևանի ու Նախիջևանի) խանությունները «Հայկական մարզ» անվան տակ, բժշկական գործն էլ կազմակերպվեց ցարական Ռուսաստանի օրինակով ու ձևով: 1849 թ. Հայկական մարզը վերակաղմվեց Երևանյան նահանգ և բաժանվեց հինգ գավառի՝ Երևանի, Նախիջևանի, Արքանդրոպոլի, Նոր-Բայաղետի և Օրգուբաղի:

Ցարական Ռուսաստանը բժշկականության կազմակերպման գործի ասպարեզում Պարսկաստանից, նախկին տիրապետողներից, ոչ մի ժամանակություն չստացավ, որովհետև ոչ մի բուժական հաստատություն, թեկող և ամենապրիմիտիվ ձևով, Հայկական մարզում՝ մինչև նրա Ռուսաստանին միացվելը, գործություն չուներ. Ամբողջ «բուժական» գործը գտնվում էր գրբացների, սափերիչների և ոսկրաբույժների (սննիչների) ձեռքին:

Ռուսաստանում 60-ական թվականներին գյուղացիների տղատարումից հետո առաջ եկան ինքնավարության տեղական օրգաններ—գնամատվոներ, որոնք բնակչության հաշվին, հատուկ զեմուավոյական հարկեր հավաքելու միջոցով՝ բժշկական կարգի միջոցառումներ էին անցկացնում:

Ինչպես հայտնի է, Անդրկովկասում զեմստվոյական ինքնավարություններ չկային: Բայց դա դեռ քիչ է:

Հայտնի է, որ Եկատերինա Ա-ի օրոք տեղի ունեցավ բըժքշշկական գործի բյուրոկրատուկան վերակառուցում:

Նորահիմն բժշկական կոլեգիաները գլխավորում էին բարձր աստիճանավորներ: 1775 թվականին հիմնվեցին հասարակական խնամատարության աւայաններ, որոնց իրավասությանը անցան բոլոր բժշկական հաստատությունները:

Հայկական ՍՍԾ Առողջապահության Մինիստրության մեջ պահպաղ արխիվային նյութերը չափազանց պերճախոս վկայում են այդ ժամանակաշրջանի բժշկական հիմնարկների խղճուկ վիճակի մասին:

1892 թ. իր տարեկան բժշկական հաշվետվության մեջ խորհրդայի համաճարակի առիթով Սուրբալուի գավառի գյուղական բժշկակ Մուխարինսկին գրում է.

«Մեռածների թիվը ոչ գալառում, ոչ հիվանդակայանից օգտվողների մեջ, ինձ հայտնի չէ. բայց նկատի ունենալով բնակիչների սովորությունը՝ բժշկական օգնության համար դիմելու այն ժամանակ, երբ հիվանդը հաճախ գտնվում է համարյա հոգեվարքի մեջ, ինչպես նաև այն, որ հիվանդները տված ցուցանքները ճիշտ չեն կատարում—սիստեմատիկ և կանոնավոր բուժման բացակայության պայմաններում, կարելի է կարծել, որ հիվանդացողների մեջ մահացության տոկոսը նույնպես մեծ է: Բնակչության մեջ հիվանդացումների բարձր աստիճանը բացարձրվում է մի կողմից՝ բազմից նշված գյուղերի և բնակարանների վատ սանիտարական վիճակով, ընտանեկան կենցաղի և հողի մշակման պայմաններով, երբ գյուղացին դաշտային աշխատանքների ամբողջ ժամանակ, հաճախ բնության անբարենպաստ պայմաններում ստիպված է ամբողջ օրը ծնկներից էլ բարձր ջրում կանգնել: Հաշվետու տարում ինքինցիոն հիվանդություններից առաջին տեղը՝ ըստ հիվանդների և մեռածների՝ գրավում է ասիական խոլերան: Համաճարակի ժամանակի պայմանական պայմանը միշտու ամեն անձամբ վերին աստիճանի խառնախնթոր տեղեկություններ ուստիկանություն էին հասցնում հենց նույն անձինք: Այդ խնդրում որևէ սիստեմ գոյություն չունի: Տեղեկություններ հավաքել բժշկական անձնակազմի միջոցով ամեն տեղ հսարաւոր չեր, որովհետեւ ամբողջ գալառում համարյա միակ բժիշկը ևս էի մնացել, քանի որ գալառական բժիշկը կատարում էր իր անմիջական պարտականությունները, իսկ իստրամադրության տակ եղած երկու ֆելզերները միանգամայն անընդունակ հանդիսացան առաջացած պահանջների նկատմամբ: Ի վիճակի չլինելով երկար ժամանակ բացակայել հիվանդակայանից, որտեղ գոնվում էին դեղորայքը և աննշան քանակությամբ դեղինֆեկցիոն միջոցներ, ևս անգամ չկարողացա այցելել խոլերայով ախտահարված բոլոր պունկտները: Հիվանդների բուժումը, կամ ավելի լավ է ասել, նրանց հսկողությունը, այն էլ ոչ սիստեմատիկ, կատարվում էր բժշկական անձնակազմի կողմից շրջագայելու սիստեմով: ոչ մի հաստատուն պունկտ չի հիմնվել: Ոչ մեկուսացում, ոչ դեղինֆեկցիա չկարողացանք կատարել ինչպես հարմարեցրած շենքերի, բավականաչափ անձնակազմի և դեղինֆեկցիոն միջոցների բացակայության, այնպես էլ, գլխավորապես, բնակիչների, նույնիսկ հայերի հրաժարվելու պատճառով, որոնք ավելի սովոր են դիմելու բժշկական օգնության:

«Ի՞սկերում կաղմակերպված խոլերային, այսպես կոչված, հիվանդանոցը զբաղեցրած էր տեղական զորամասերի ստորին աստիճանավորների և կալանավորների կողմից, իսկ բնակիչներն ավելի շուտ համաձայնվում էին մեռնել քան տեղավորված լինել «հիվանդանոցում»: «Բուժման» փոխարեն, իմ կողմից գործածված «հիվանդների հսկողություն» արտահայտությունը ևս ավելի ճիշտ եմ համարում այն պատճառով, որ համաճարակի ժամանակ այցելած հիվանդներից շատերը կատեգորիկ և համառորեն հրաժարվում էին որևէ զեղ ընդունելու, անմառեն երկյուղ կրելով, որ կարող են թունավորվել. ուստի հարել էր լինում սահմանափակվել հիվանդների և դիետիկ միջոցների ցուցումներով և այնպիսի միջոցներով, որոնք հետապնդում էին անձնական անվտանգությանը վարակից: Բայց նաև այս ցուցումները չեն կատարվում, հիվանդները կեղտոտ էին պահվում, նրանց արտաթորությունները ֆափում էին ուր պատահեր, հիվանդներին շարունակ շրջապատում էին բազմաթիվ հարազատներ և աղջականներ, ըոլորը գործ էին ածում անհամապատասխան և նույնիսկ մասամբ անունդ, խմելու ջուրը կեղտոտ էր, մեծ մասամբ վերցրած առուներից կամ ծրորներից, որոնք գտնվում էին ծայր աստիճան կեղտոտ հողային պայմաններում. ամանեղենը և նույնիսկ անկողինը ընդհանուր էին: Այս ըոլորը չեր կարող չընպատել հիվանդության տարածման...»:

Այսպես շարունակվում էր մինչև քսաներորդ դարի սկիզբը: 1902 թ. հոկտեմբերի 4-ին Գյուղատնտեսության կայսերական կովկասյան ընկերությունը դիմեց կովկասյան բժշկական ընկերությանը հետեւյալ գրությամբ.

«Գյուղատնտեսական արդյունաբերության կարիքների մասին հատուկ խորհրդակցության ծրագիրը քննարկելիս՝ «Գյուղատնտեսության կայսերական ընկերության նիստում մատնանշվեց, որ գյուղական ընակչության բժշկական օգնության կաղմակերպումը էական աղքեցություն է ունենում նրա բարեկեցության վրա, բայց Ընկերությունը չկարողացավ քննության առնել այն՝ նման հարցերում անձեռնհաս լինելով, ուստի որոշեց խնդրել Կովկասյան կայսերական բժշկական ընկերությանը՝ հանձն առնել այդ խնդիրը և վերոհիշյալ հարցը քննության առնել մոտակա նիստերից մեկում և իր եղբակացությունը հաղորդել նրան»:

Գյուղատնտեսության կովկասյան կայսերական ընկերու-

թյան շոշափած հարցը կովկասյան բժիշկների գեռկ երկրորդ համագումարում դարձել էր տաք վիճաբանությունների առարկա, որոնք առաջացել էին բժ. Նազարովի զեկուցման հիման վրա համագումարը որոշեց.

«Կովկասում բժշկական գործի բարեկավման լավագույն ձևը կլիներ բժշկական մասի կազմակերպման այն տիպը մատցնել, որը գոյություն ունի Ռուսաստանի զեմստվոյական նահանգներում, և դրա հետևանքով միջնորդում է երկրի աղմինիստրացիայի առաջ՝ բժշկական կազմակերպության այդ տիպը կովկասում ամենաշտապ կերպով մատցնելու մասին»:

Անդրկովկասի գյուղական բնակչությանը բժշկական օգնություն կազմակերպող Հանձնաժողովի անդամ բժ. Ս. Ի. Վացաձեն կազմեց մի զեկուցագիր, որի մեջ Մոսկվայի նահանգի զեմստվոյական բժշկականությունն ընդունելով բժշկակազմակերպության իդեալ, ցանկություն է հայտնում, որպեսզի Անդրկովկասի բժշկական մասի ապագա կազմակերպությունն էլ կառուցված լինի այն տիպի համապատասխան, որպիսին գործում է Մոսկվայի զեմստվոյում:

Բժ. Վացաձեի զեկուցումը ցույց է տալիս, թե որքան բարձր էին գնահատում բժիշկները սանիտարապրոֆիլակտիկ միջոցառումները: Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ Անդրկովկասյան բժիշկները (Լունկեիչ, Վեսելովզորով, Կիլոնկ, Վացաձե, Թաբան, Խարազով) սերտորեն կապված էին զեմստվոյական բժշկականության առաջավոր գործիչների հետ և իրազեկ էին այն հարցերին, որոնք քննարկվում էին բժշկական համագումարներում:

Ճիշտ է, այս զեկուցումը Հանձնաժողովում որոշ փոփոխությունների ենթարկվեց: Հանձնաժողովի մի քանի անդամներ ելնում էին այն բանից, թե գյուղական-բժշկական օգնության կազմակերպման գործում չի կարելի օգտվել Մոսկվայի զեմստվոյի ավալներից, որովհետև Մոսկվայի նահանգը ամենահարուստն է ամբողջ Ռուսաստանում և այդ պատճառով պետք է օգտվել այնպիսի նահանգի տվյալներից, որտեղ բժշկական կարիքների համար ծախսվող գումարը այնքան էլ մեծ չէ:

Այսուամենայնիվ Հանձնաժողովը հանգեց հետևյալ եզրակացության.—

1. Գյուղական-բժշկական գործն Անդրկովկասում ներկայում անբավարար է դրված:

2. Լավագույն կաղմակերպությունը, որն առավել չափով կապահովի գյուղական բնակչությանը բժշկական օգնությամբ, այն է, որը դրված է զեմստվոյական բժշկականության հիմքում:

Սակայն, ինչպես հայտնի է, ոչ մի էական փոփոխություն տեղի չունեցավ Անդրկովկասի բժշկա-սանիտարական հիմնարկ-ների կյանքում:

Առկա գրության լավագույն իլուստրացիան Երևանի նահանգի 1913 թ. համառոտ ակնարկն է, որը բժշկության տեսագծով կազմել է բժ. Զախարովը:

«Երևանի նահանգը, որը գրավում է 24.750 քառ. վերստարածություն, առ 1-ն հունվարի 1914 թ. ուներ 918.619 բնակչություն, ըստ այնու մեկ քառա կուսի վերստի վրա բնակվում է մոտ 37 մարդ ։ Նահանգը 1910 թվին ուներ 14 գյուղական բժշկակայան և նույնքան էլ ֆելդշերական պունկտեր, 14 գյուղական բժժիշկներով ու 14 առաջին կարգի գյուղական մանկաբարձուհիներով, ինչ վերաբերում է ընդհանուրապես նահանգի և մասնավորապես գյուղական բնակչությանը բժշկական օգնությամբ լրիվ ապահովելու հանգամանքին, ապա պետք է ընդունել որ գավառի համար երկու գյուղական հիվանդանոցի գոյությունը (նըրանց գործունեության մոտ 30 վերստ շառավիղով), այն էլ անբարեհաջող տուպոգրաֆիկ պայմաններում՝ պետք համարել անբավարար։ ուստի նահանգական աղքինիստրացիան մշտական միջնորդություն է հարսուցում նոր գյուղական բժշկակայաններ և ֆելդշերական պունկտեր բանալու մասին, չնայած այն բանին, որ գյուղական բնակչությունը երբեմն օգտվում է նաև քաղաքային հիվանդանոցների սպասարկությունից, բայց վերջիններին թիվը նույնպես շատ փոքր է քաղաքներում, իսկ մահճակալների քանակը շատ սահմանափակ։

«Այսպես, Երևանում և Ալեքսանդրոպոլում կա մեկական հիվանդանոց՝ առաջինում 35 մահճակալով։ և երկրորդում՝ 20, ըստ որում ունենորները վճարում են ամսական 15 ռուբլի ստացիոնար բուժման և 40 կոպ. ամբուլատոր ընդունելության համար։ Իսկ Նախիջևան, Նոր-Բայալվան և Օրդուբադ քաղաքներում առաջմ չկան հիվանդանոցներ, բացառությամբ կայսրուհի Մարիա Ալեքսանդրովնայի կույրերի խնամատարության աշքի բուժմանների՝ Նոր-Բայալեատում և Երևանում։ Աչքի յուրաքանչյուր հիվանդանոցում կա 4 մահճակալ, այդ բուժմարաններում կատարվում է ձրի ամբուլատոր ընդունելություն և ստացիոնար բու-

Ժուն, 1910թ. հոկտեմբերի 1-ից Երևանում բացված է հոգեկան հիվանդների ապաստարան. տղամարդկանց համար 20 մահճակալով, ամսական 12 ռ. վճարով։ Աղատ պրակտիկայով պարապող բժիշկների կողմից պահպան են մասնավոր բուժարաններ, երկուսն էլ գտնվում են Երևան քաղաքում, որոնցից մեկը՝ բժիշկ Ա. Ն. Տեր-Ավետիսովինն է, ունի 10 մշտական մահճակալ, վը-մարավի՝ հատուկ համաձայնությամբ ստացիոնար հիվանդ պահելու և 50 կոպ. աջրուլատոր այցելության համար, մյուսը՝ բժ. Հ. Գ. Հովհաննիսյանը ունի 6 մշտական մահճակալ, հատկապես վիրաբուժական օգնություն պահանջող հիվանդների համար։

Այսպես էլ շարունակվեց մինչև դաշնակները գրավեցին իշխանությունը Հայաստանում։

Խոր տնտեսական քայլայումը, աղքատությունն ու սովը, բնակչության ֆիզիկական հյուծումը, անհոգ վերաբերմունքը զեպի մարդկանց առողջության պահպանման հարցերը — բարենպաստ հող էին պատրաստել համաճարակային հիվանդությունների առաջացման, զարգացման ու լայնորեն տարածման համար։ Դաշնակցական կառավարողների կողմից սահմանված կարգերը նպաստում էին համաճարակների անարգել զարգացմանը։

Ինֆեկցիայի աղբյուրների, վարակի փոխանցման և բնակչության զգայունակության, այսինքն՝ էպիդեմիական ընթացքի երեք պարտադիր օղակների վրա ազդող պայմանների լիակատար բացակայությունը լրիվ բացատրում են մեզ ինֆեկցիոն հիվանդությունների բացառիկ տարածման պատճառները 1918թ. մինչև 1920թ.։

Այս մասին ամենից շատ պերճախոս են դաշնակցական Հայաստանի քաղաքացիական վարչության բժշկա-սանիտարական բաժնի արխիվային նյութերը։

Բժշկա-սանիտարական բաժնի գործիչները 1920թ. հունվարի զեկուցագրի մեջ երազում էին պահպանել բուժական հիմնարկները թեկուղ այն վիճակում, ինչ վիճակում նրանք ըստացվել էին ցարական տիրապետությունից։ Նրանք զանգատվում էին, որ բժշկական անձնակազմի, ինչպես նաև նյութական միջոցների բացակայության պատճառով՝ քաղաքային և գյուղական հիվանդանոցների ֆունկցիաները ավելի քան կիսով չափ կրճատվել են, նախկինում գոյություն ունեցող 20 գյուղական և քաղաքային թղուկ հիվանդանոցներից, նե-

բառյալ 14 ֆելդշերական պունկտերը, մնացել է սիայն 9 հիվանդանոց և 3 ֆելդշերական պունկտ:

Ի՞նչ էին անում դաշնակցական կառավարողները ինֆեկցիաների աղբյուրների վրա ներգործելու համար:—Բացարձակապես ոչինչ, թերենք մի քանի փաստեր:

Ախտայի բժշկա-սանիտարական տեղամասի հաշվետվության տվյալներից երեսում է, որ ինֆեկցիոն հիվանդների հոսպիտալացման առկոսը արտահայտվում էր, որպես կանոն, աննշան չափերով, իսկ մի քանի ինֆեկցիաներ բոլորովին չէին ենթարկվում մեկուսացման, բնական ծաղիկ հայտարերված է 18, հոսպիտալացված—0, կարմրուկ՝ հայտարերված է 32, հոսպիտալացված—0, քութեղ՝ հայտարերված է 6, հոսպիտալացված—0, բծավոր տիֆ՝ հայտարերված է 604, հոսպիտալացված միայն 27, հետազարձ տիֆ՝ հայտարերված է 210, հոսպիտալացված —16:

Դարավիլիսայի բժշկա-սանիտարական տեղամասի տվյալների համաձայն՝ բծավոր և հետադարձ տիֆով տառապող հիվանդներին տանն են թողնում, բծավոր տիֆով 78, հետադարձ տիֆով 213 և դիգենստերիայով տառապող 188 հիվանդներից և ոչ մեկը աեղալորված չի եղել ստացիոնարում:

Հիվանդի—ինֆեկցիա կրնդի նկատմամբ այդպիսի վերաբերմունքի առկայության զեղքում զարմանալի չէ, որ պարագիտակիրներն ու հիվանդները ազատ կերպով ման էին գալիս, առաջացնելով հիվանդությունների նոր գեղքեր:

Դաշնակցական կառավարության գլխավոր բժշկա-սանիտարական վարչության պետի օգնական բժ. Մալյուժենկոն գրում է.

«1919 թ. Հայաստանում, փախստականներով լցված երկրում (200 հազարից ավելի), մեզ վիճակից ապրել ամենազարհուրեալի թշվասություններ համաձարակային հիվանդությունների՝ բծավոր, հետազարձ և մասամբ որսվայնային տիֆի զարգացման իմաստով, որոնք տարան ոչ քիչ զոհեր, և խոլերայի, որը թեև առանձին զարգացում և տարածում չուներ, բայց դրա փոխարեն աչքի էր ընկնում ծանրությամբ (չոր ձեռ) և մահացության մեծ տոկոսով (50-ից ավելի): Հարթավայրերում մշտապես բուն դրած և բնակչության կողմից անմեղ հիվանդություն համարված մալարիան, 1919 թ. ամառն, աշնանը այն աստիճան ուժեղ և մահացության այնպիսի հսկայական տոկոսով զարգացավ, որ ընակչությունն ընկալ խուճապի մեջ և, իրոք, այդ ժամանակաշրջանում ընակչության մեջ, որ զուրկ էր մնացել իմինինից, որպեսին

բավարար քանակությամբ չկար նաև Անդրկովկասի շուկաներում, երեսն եկավ Սև ծովի ափերից և մասմբ Հնդկաստանից ներածված տրոպիկական տեսղի մի նոր ձև, Վերը նշված հիվանդությունների լրիվ վիճակագրական տվյալները 1919 թ. համար, առայժմ, մինչև լրիվ հարյվետվություններ ստանալը՝ անհնար է ներկայացնել բայց կարելի է մատնանշել միայն որոշ տվյալներ, որոնք բնորոշում են բժավոր տիֆի հաճածարակի տարածման աստիճանն ըստ ամիսների: Այսպես, խաղաղ ժամանակվա 30 հազարի փոխարեն մոտ 90 հազար բնակչությամբ ծանրաբեռնված երեսն քաղաքում բժավոր տիֆը տվել է մինչև հունվարի 13-ը—473 դեպք, հունվարի 21-ը—1394, հունվարի 25-ը—1612, հունվարի 30-ը—2003, փետրվարի 1-ը—2103, փետրվարի 5-ը—2203, փետրվարի 10-ը—2220, Հետադարձ տիֆն սկսեց խիստ զարգանալ փետրվարի վերջից, 1919 թ. մայիսի 1-ից մինչև 1920 թ. ժամանակամիջոցում երեսն քաղաքում գրանցված է 584 դեպք 2,0 տոկոսից ոչ ավելի մահացությամբ: Խոլերան երեսն եկավ հուլիսին և մնաց մինչև նոյեմբերը: Ուներ թույլ զարգացում: Քաղաքում գրանցված է խոլերայի միայն 40 դեպք 20-ի մահացությամբ (50 տոկոս): Ինֆեկցիոն ծագում ունեցող հիվանդություններից հարկավոր է նշել ստամոքս-աղիքային հիվանդությունները, որոնք առաջացել են աննորմալ և անբավարար սննդան հետևանքով, մանավանդ փախստականների մեջ, որ մահացության հսկայական տոկոս տվին: Այդ մասին կարելի է դատել քաղաքի փողոցներից ու հրապարակներից հավաքված և բուժական հաստատություններից դուրս տարված դիակների թվով: Այսպես, հունվարին դուրս է տարված և թաղված 650 դիակ, փետրվարին 751, մարտին 749, ապրիլին 768, մայիսին 714, հունիսին 924, հուլիսին 808, օգոստոսին 821, սեպտեմբերին 876, հոկտեմբերին 822, նոյեմբերին 490 և դեկտեմբերին 941, ընդամենը 9055 դիակ:

Բերգված փաստերից երեսում է, որ խիստ բազմաթիվ համաձարակային հիվանդացությունների պայմաններում մեկուսացման են ենթարկվում հիվանդների շատ չնշին քանակություն, որը ոչ մի նշանակություն չուներ համաճարակի վրա ազդելու համար:

Դաշնակցական կառավարության Խնամատարության մինիստրության 1919 թ. ծախսերի նախահաշվով (բժշկա-սանիտարական վարչության գծով) նախատեսված էր կազմակերպել ստացիոնարներ ինֆեկցիոն բաժանմունքներով: 540 մահճակալ-

ների ընդհանուր թվից 155-ը պետք է սպասարկեր ինֆեկցիոն հիվանդներին:

«Համապատասխան շենք չունենալու պատճառով, — զրում էր Քեղշբենդի բժիշկ Տեր-Առաքելյանը 1919 թ. հունվարի 28-ին, — հիվանդներին չի կարելի մեկուսացնել սպիտակեղենի պակասություն է զգացվում»:

Ինչպես երկում է բժշկաւսանիտարական բաժնի պաշտոնական փաստաթղթերից, սուր վարակիչն հիվանդությունների հետ միասին մեծ տարածում ստացավ մալարիան: Մալարիայի ինֆեկցիայի սպեցիֆիկ բուժումը, ինչպես հայտնի է, շատ էֆեկտավոր է, որովհետեւ քիմիոթերապիայի գեպքում վարակված օրգանիզմը զարգարում է ինֆեկցիայի ազդյուր լինելուց:

Բերենք մալարիայի գեմ պայքարի զրվածքը ընորոշող տվյալներ: Ինչպես երկում է բնակչությանը խինին մատակարարելու տվյալներից, մեկ մալարիայով հիվանդին ընկնում էր միջին հաշվով 1,5 գրամ խինին և այդ էլ այն պայմաններում, եթե Մալյուժենկոյի կարծիքով բնակչության 30,0 տոկոսը հիվանդ էր մալարիայով:

«Որպեսզի եկող տարի մալարիան այնպիսի ուժով չըռընկալի, ինչպես ընթացիկ տարում, — ասում էր գլխավոր բժշկական վարչության պետ բժիշկ Տեր-Միքայելյանը ռեսպուբլիկական մալարիային կոմիտեի նիստում 1919 թ. նոյեմբերի 9-ին, — անհրաժեշտ է անցկացնել բնակչության խինիդացիա... Շըշկով Սուրբ մալուքում, կշմիածնի գտփառում, Ղամարլուի, Շինդավիթի և Թաղաքինդի շրջաններում, ես նկատեցի ընդհանուր հիվանդացում մալարիայով, ըստ որում նաև տրոպիկական մալարիայով, որից մահացությունը շատ մեծ է, և մենք վերջին շարաթվա ընթացքում կորցրինք երկու բժիշկ՝ զինվորական բժիշկ Տեր-Դուկայանին և գյուղական բժիշկ Աղաջանյանին: Մեծ է հիվանդացումը մեր զորքի մեջ. շատ տեղերում ես նկատում էի, որ զինվորները պահակության էին գուրս գալիս երկու պարուքալիքների միջև ընկած ժամանակամիջոցում, հազնվ ի վիճակի լինելով հրացանը բռնել... 1910 թ. երեանի, Ծջմիածնի և Սուրբալուի գտփառներում կար 338,631 բնակիչ, եթե ենթադրենք, որ ներկայում մնացել է միայն կեսը, այն է՝ 170.000 մարդ, և յուրաքանչյուրին տանք ոչ թե 30 գրամ, այլ միայն 5 գրամ խինին, այս գեպքում անհրաժեշտ կլինիք միայն սմասնակից խինիդա-



ցիայի համար նրանց տալ 510 կիլո խինին, իսկ այդ քանակությամբ խինին ոչ մի տեղից չենք կարող վերցնել:

Նույնպիսի շատ անմիտիթար պատկեր են նկարագրում դաշնակցական ժամանակի այլ բժիշկները: Ղարսի նահանգական բժիշկ Ս. Տերտերյանը, Ղարսի նահանգի 1919 թ. ժողովրդական առողջության վիճակի, բնակչության բժշկական օդնության կազմակերպման և ստնիտարական վիճակի մասին իր տարեկան հաշվետվության մեջ նշում է:—

«Միայն Ղըզըլ-Զախալիք բժշկական տեղամասի բնակիչների թիվը կազմում էր 41,000 մարդ, տեղամասի բնակավայրերի թիվը 58, սահմանի ամենամեծ հեռավորությունը բժշկի բնակավայրից 50 վերստ: 25 մահճակալանոց հիվանդանոցը աշխատում էր շատ թերի բեռնվածությամբ, իսկ առ 1-ն օգոստոսի հիվանդանոցում բոլորովին հիվանդ չկար: Համաճարակների գիմ պայքարի հատուկ միջոցառությունը ձեռք չեն առնվել (սուբ-վարակիչ հիվանդացությունների 674 դեպքի առկայության պայմաններում): Խինինային պրոֆիլակտիկա չէր տարվում, չնայած մաշրիայի առկայությանը այդ շընանում՝ բավական քանակությամբ խինինի բացակայության պատճառով: Ծաղկի պատվաստությունը չեն արված բժշկական անձնակազմի պակասության պատճառով: Արդահանի տեղամասի 46,822 բնակչին ընկնում էր մեկ բժիշկ, ընդորում տեղամասի սահմանի հեռավորությունը բժշկի բնակավայրից 75 վերստ է: Տարվա ընթացքում Արդահանի 10 մահճակալանոց հիվանդանոցում բուժվել է երեք հիվանդ, պառկելով՝ 43 մահճակալ-օր, դրանցված 7,336 ամբուլատոր հիվանդների առկայության պայմաններում: Համաճարակային հիվանդությունները Արդահանի շընանում՝ բավականին լայն զարգացում ունեին, բայց դժբախտաբար բժիշկների բացակայության պատճառով՝ համաճարակների ոեմ պայքարի գործը փաստորեն գտնվում էր քելտշերների ձեռքին, բժիշկը հսարավորության չափով այցելում էր առավել ախտահարված բնակավայրերը: Տեղամասի սահմաններում նկատվում էր սաստկացած հիվանդություն որովայնային և հետաղաբձ տիֆերով ու ծաղիկով: Հիվանդներ են գրանցված որովայնատիֆով՝ 1,674, հետաղաբձ տիֆով՝ 1254 և ծաղիկով՝ 742, Խինինային պրոֆիլակտիկա չէր կիրառվում: Շատ բնորոշ է, որ 46,822 մարդու մեջ բնական ծաղկի 742 դեպքի առկայության պայմաններում տեղամասի

Եջմիածնի դատական սանիտարական բժիշկ Զ. Ի. Տեր-Մինասովը 1920 թվի փետրվարի 19-ի գեկույցի մեջ գրում է.

«Այս ըստ զավառի սանիտարական վիճակը գտնվում էր ծայրահեղ անբարենպաստ պայմաններում: Քարուքանդ արված, ավերակների վերածված գյուղերը լցվում էին սատկած կենդանիների նեխված մնացորդներով, և ամեն տեսակի անմաքրություններով: Այսպիսի զրությունը չէր կարող չազգել ինֆեկցիոն հիվանդությունների զարգացման վրա՝ կապակցված ընակշության քաղցածության հետ: Տները, բակերը, հրապարակները, ջրհորներն ու ոռոգման առուները պահպան էին ոչ պատշաճ մաքրության մեջ, դրան նպաստում էին բանվորական ձեռքերի բացակայությունն ու արտասովոր թանկությունը:

«Դավառում բաղանիքներ համարյա չկան, իսկ հասարակական օգտագործման համար վաղարշապատում պահպող բաղանիքը խեղողուկ էր ողովի, կեղտոտ ու մռայլ մի շենք է:

«Բաղանիքում գործածվող ջուրը, որ գալիք է ոռոգման առուներից, նույնպես աչքի չի ընկնում իր մաքրությամբ: Բնակչությունն առանձնապես տանջվում է ոչ միայն լավորակ ջրի բացակայությունից, այլև ընդհանրապես նրա պակասությունից, քանի որ ամսանը գյուղերից շատերը բոլորովին ջուր չունեն: Գետի ջրին ամենուրեք փոխարինում է ջրհորի ջուրը, իսկ ջըրհորները պրիմիտիվ կառուցվածք ունեն և կեղտոտ են պահպում: Այս վայրերում, որտեղ ոռոգման առուներ կան, օգտվում են այդ ջրից, որը վերին աստիճանի անմաքրություն է, կեղտոտված սպիտակեղեն լվանալուց և անասուններ լողացնելուց, հենց այդ էլ հաճախ պատճառ է դառնում վարակիչ հիվանդությունների տարածում:

Այսպիս էր զաշնակների ժամանակ զրությունը ամենուրեք բնակչության բժշկա-սանիտարական սպասարկման տեսակետից:

Բերված տվյալների հիման վրա գալիք ենք այն եղբակացության, որ զաշնակների տիրապետության տարիներին լայնութեն տարածված համաճարակային հիվանդություններն անարգել տառչանում, զարգանում և տարածվում էին ինֆեկցիաների համար բարենպաստ հողի վրա:

Միանդամայն ակնհայտ է զառնում, որ զաշնակցական շառավագահությունը չէր կարող զիմաքել բնակչության առողջության խիստ վատթարացման պրոցեսին:

Г. А. ГЕВОНДЯН

ТЯЖЕЛОЕ НАСЛЕДИЕ

Автор дает в статье краткую характеристику организаций дела здравоохранения в б. царской России.

Россия при царизме была одной из самых отсталых капиталистических стран. Проводя политику национального угнетения и эксплуатации трудовых масс, царское правительство не проявляло никаких серьезных забот по организации лечебной и санитарной службы в бывшей Эриванской губернии. Безкультурье, антисанитария, крайне слабая организация мероприятий, направленных к охране здоровья населения в бывшей Эриванской губернии, создавали все предпосылки для распространения эпидемических болезней в весьма больших масштабах, дававших высокую смертность. Этим и объясняется то, что эпидемии таких болезней, как холера, оспа и др., уносили среди населения Армении очень много жертв. Особенно большие опустошения производила малярия, являвшаяся исключительно жестоким бичом населения б. Эриванской губернии. Из-за малярии в целом ряде районов губернии население не давало никакого пророста и форменно вымирало.

В дашнакское время смертность держалась на высоких цифрах вследствие крайне ограниченного стационарного коечного фонда, редкой сети амбулаторных учреждений и почти полного отсутствия специального детского медицинского обслуживания и противоэпидемической службы.

Исключительное по своей тяжести санитарно-эпидемическое наследие потребовало много усилий и средств со стороны органов советского здравоохранения для ликвидации этих печальных для страны последствий.